

**Visa վճարային քարտերի տրամադրման ակցիա**  
**Ակցիայի տեղեկատվական ամփոփագիր**

**Ակցիան գործում է 2019թ.-ի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը ներառյալ**

<b>Վճարահաշվարկային համակարգ</b>	Visa
<b>Քարտի տեսակ</b>	Դեբետային / Հաշվարկային
<b>Քարտի գործողության ժամկետ</b>	36 ամիս
<b>Արժույթ</b>	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ Ռուբլի
<b>Սպասարկման վճար</b>	Ակցիայի շրջանակներում նոր Վիզա քարտերի տրամադրումն իրականացվում է գործող սակագներից 50% զեղչով՝ գործողության ամբողջ ընթացքի համար
<b>Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո քարտի տրամադրման ենթակա լինելու առավելագույն ժամկետը</b>	Երևան քաղաքում գտնվող մասնաճյուղերի դեպքում՝
	- Դեբետային՝ 5 աշխատանքային օր - Հաշվարկային՝ 10 աշխատանքային օր
	Երևան քաղաքից դուրս գտնվող մասնաճյուղերի դեպքում՝
	- Դեբետային՝ 10 աշխատանքային օր - Հաշվարկային՝ 15 աշխատանքային օր
	Քարտն ակտիվանում է 1 օրվա ընթացքում

**Միավորներ**

2019թ.-ի ապրիլի 1-ից հունիսի 30-ը ներառյալ Վիզա քարտով POS տերմինալների միջոցով նվազագույնը հանրագումարային 200,000 ՀՀ դրամի անկանխիկ գործարքներ կատարված հաճախորդները կկուտակեն Աստղեր հետևյալ չափերով՝

200,000 - 399,999 ՀՀ դրամ	100 Աստղ
400,000 - 699,999 ՀՀ դրամ	200 Աստղ
700,000 - 999,999 ՀՀ դրամ	300 Աստղ
1,000,000 և ավելի ՀՀ դրամ	400 Աստղ

Գործարքների քանակի համար նույնպես կուտակվում են միավորներ՝ յուրաքանչյուր գործարքի դիմաց 100 Աստղ:

Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը կկատարվի հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Ակցիայի շրջանակներում ամենամեծ քանակությամբ Աստղեր կուտակած տաս մասնակիցներ կստանան մրցանակներ:

Հավասար Աստղերի քանակի դեպքում առաջնահերթությունը կտրվի քանակային շատ գործարք կատարած քարտապանին:

Առցանց գնումները, քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշվի փոխանցումները, կոմունալ վճարումները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

Ակցիային մասնակցում են միայն Բանկի կողմից Վիզա վճարահաշվարկային համակարգի ներքո թողարկված քարտերը՝ բացառությամբ կորպորատիվ և Visa Gift /այդ թվում՝ Visa Gift Instant Issue/ քարտատեսակների:

Ակցիայի պայմանները չեն տարածվում կից և հավելյալ քարտերի վրա:

Վճարային քարտի ընդհանուր պայմաններ

Քարտատեսակ	Ուսանողական քարտ Visa Classic Դեբետային և հաշվարկային	Visa Classic Դեբետային	Visa Classic Հաշվարկային	Visa Gold Դեբետային և հաշվարկային	Visa Platinum Հաշվարկային	Visa Infinite Հաշվարկային
Տրամադրման վճար	0					
Տարեկան սպասարկման վճար	500 ՀՀ դրամ	2,500 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ	12,000 ՀՀ դրամ	30,000 ՀՀ դրամ	75,000 ՀՀ դրամ
Հավելյալ/Կից քարտի տրամադրման վճար	-	3,000 ՀՀ դրամ միանվագ		0		
Գործարքներ առևտրային կետերում	0					
Բանկի կանխիկացման կետերում և բանկոմատներում կանխիկի տրամադրման միջնորդավճար	Դեբետային՝ 0%, Հաշվարկային՝ 0.2%	Դրամային հաշվով քարտ՝ 0.2% Արտարժույթային հաշվով քարտ՝ 0.3%	Արտոնյալ ժամանակահատվածով՝ 0.9% Ոչ արտոնյալ ժամանակահատվածով՝ 0.5%	Դեբետային՝ 0.5%, Հաշվարկային՝ 0.9%	0.9%	0.9%
Այլ բանկերի կանխիկացման կետերում և բանկոմատներում կանխիկի տրամադրման միջնորդավճար	ԱրՔա համակարգի այլ բանկեր՝ 1% ԱրՔա համակարգից դուրս՝ 1%, նվազագույնը 1,500 ՀՀ դրամ					
Կանխիկացման գործարքի օրական առավելագույն սահմանաչափ (կարող է փոփոխվել հաճախորդի դիմումի համաձայն)	500,000 ՀՀ դրամ 1,500 ԱՄՆ դոլար 1,000 Եվրո			1,500,000 ՀՀ դրամ 4,000 ԱՄՆ դոլար 3,000 Եվրո	2,000,000 ՀՀ դրամ 6,000 ԱՄՆ դոլար 4,000 Եվրո	5,000,000 ՀՀ դրամ 15,000 ԱՄՆ դոլար 15,000 Եվրո
	50,000 ՌԴ ռուբլի			-		
Կանխիկացման մեկ գործարքի առավելագույն սահմանաչափ միայն (բանկոմատներից կանխիկացնելու դեպքում)	500,000 ՀՀ դրամ					
Կանխիկացման գործարքների օրական առավելագույն քանակ (կարող է փոփոխվել հաճախորդի դիմումի համաձայն)	10				25	
Քարտային հաշվից կանխիկի տրամադրում՝ առանց քարտը ներկայացնելու	1%					
Բանկումատով քարտային հաշվին կանխիկի մուտքագրում	Կոմպլեքս Բանկ՝ 0.2% ԱրՔա համակարգի այլ բանկեր՝ 0.6%					
Բանկի վճարային տերմինալով քարտային հաշվին կանխիկի մուտքագրում	100 - 50,000 ՀՀ դրամ՝ 100 ՀՀ դրամ 50,001 - 200,000 ՀՀ դրամ՝ 200 ՀՀ դրամ					
Քարտից քարտ փոխանցումներ	0.5%	1%		Դեբետային՝ 0.5% Հաշվարկային՝ 1%	1%	
Արտոնյալ ժամանակահատվածով հաշվարկային քարտերի դեպքում քարտային հաշվից այլ հաշվի փոխանցում	-	0.9%				
Արտոնյալ ժամանակահատվածով հաշվարկային քարտերի դեպքում նվազագույն վճարը չկատարելու դեպքում ժամկետանց գումարի վրա հաշվարկվող տուգանք	-	<b>Ժամկետանց գումարի 0.13%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար</b>				
Արտոնյալ ժամկետի ավարտին պարտադիր նվազագույն վճար	-	Վարկային սահմանաչափի օգտագործված մասի 10%				
Բանկի «Վճարային Պորտալ» համակարգով քարտից քարտ փոխանցումների սակագներ	ԱրՔա համակարգի անդամ բանկի Arca, Visa, MasterCard քարտին	0.5%	1%		Դեբետային՝ 0.5% Հաշվարկային՝ 1%	1%
	ԱրՔա համակարգի անդամ չհանդիսացող բանկի Visa քարտին	1.5%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ		Դեբետային՝ 1.5%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ Հաշվարկային՝ 2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ	2%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոս (տարեկան)	ՀՀ դրամ՝ 4% ԱՄՆ դոլար՝ 1% Եվրո՝ 0%		0			

Քարտային հաշվից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ քաղվածքի տրամադրում (մեկ անգամ)	0				
Քարտային հաշվից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությունից բացի հավելյալ քաղվածքի տրամադրում	Մինչև 3 տարի վաղեմության դեպքում՝ 1,000 ՀՀ դրամ, 3 տարի և ավելի վաղեմության (Բանկում պահպանված լինելու դեպքում)՝ 3,000 ՀՀ դրամ				
Վճարային սահմանաչափի գերազանցման դեպքում գերազանցող գումարի նկատմամբ կիրառվող տույժ	<b>Գերազանցող գումարի 0.13%-ի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար</b>				
Կորցրած/գողացված/վնասված քարտի, քարտի տեսակի փոփոխության դեպքում նոր քարտի և ծածկագրի տրամադրում	2,000 ՀՀ դրամ			0	
Նոր քարտի դիմում-հայտի կամ գործող քարտի՝ տարբեր պատճառներով վերաթողարկելու դեպքում քարտի և ծածկագրի տրամադրում նույն օրվա ընթացքում	3,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	10,000 ՀՀ դրամ
Արտերկրում քարտի կորստի դեպքում քարտային հաշվից կանխիկ դրամի տրամադրման միջնորդավճար	Գումարի 5%				
Հետգանձման անհիմն հայտի ներկայացում	1,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ			
Քարտին կատարված մուտքերի և ելքերի վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում, USSD ծառայության հարցման հիման վրա SMS հաղորդագրության ուղարկում: Գումարների մեջ ներառված է ԱՎՀ-ն	20 ՀՀ դրամ ՀՀ բջջային օպերատորների հեռախոսահամարներին 40 ՀՀ դրամ արտերկրյա բջջային օպերատորների հեռախոսահամարներին		0		
Քարտի ապաբլոկավորման վճար (3 անգամ սխալ մուտքագրված ՊԻՆ ծածկագրի դեպքում)	500 ՀՀ դրամ				0
Քարտի գործողության կասեցում բանկի հավաստագրման համակարգում և տեղադրում Stop-list-ում (երկու շաբաթվա համար)	15,000 ՀՀ դրամ				
Վարկային սահմանաչափի տրամադրման/ավելացման միանվագ վճար (կիրառվում է նաև վերաթողարկումների դեպքում)	Տրամադրվող սահմանաչափի / ավելացվող գումարի 0.3%	-	Տրամադրվող սահմանաչափի / ավելացվող գումարի 0.3%		
Վարկային սահմանաչափի նվազեցում հաճախորդի դիմումի համաձայն	0				
Վարկային սահմանաչափի ավելացում հաճախորդի դիմումի համաձայն	1,000 ՀՀ դրամ	-	3,000 ՀՀ դրամ	5,000 ՀՀ դրամ	0
Արտասահմանյան ուղևորությունների ընթացքում բժշկական ապահովագրության տրամադրում	Ըստ ապահովագրական ընկերության սակագների				0
Օդանավակայանների բարձրակարգ գոտիներից օգտվելու /Priority Pass/ ծառայության վճար՝	-				14,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր անձի մեկ այցի դիմաց

Ավցիային մասնակցում են նաև աշխատավարձային նախագծերի շրջանակներում տրամադրված Visa դեբետային և հաշվարկային քարտերը, որոնց սակագները սահմանվում են համապատասխան գործատուի հետ ունեցած կորպորատիվ պայմանագրով:

**Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**

**Դեբետային քարտերի դեպքում**

1. Դիմում-հայտ
2. Անձը հաստատող փաստաթղթի և Հանրային ծառայությունների համարանիշի, կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանքի (չի պահանջվում նույնականացման քարտի առկայության դեպքում) բնօրինակները,

**Հաշվարկային քարտերի դեպքում՝ նաև.**

3. Տեղեկանք աշխատանքի վայրից՝ գործատուի ձևաթղթի վրա, որտեղ պետք է նշված լինի զբաղեցրած պաշտոնը, աշխատանքի ստաժը և զուտ աշխատավարձի չափը, ընդ որում տեղեկանքի տրամադրման ժամկետը չպետք է գերազանցի 20 օրացուցային օրը: Աշխատանքի վայրից տեղեկանքը չի պահանջվում դրամական միջոցներով

ապահովված հաշվարկային քարտերի դեպքում, նաև, եթե հաճախորդը դիմելու պահի դրությամբ առկա չեն նախորդ 6 ամսվա ընթացքում աշխատավարձը ստացել է Բանկի միջոցով: Որոշ դեպքերում կարող է ընդունվել 6 ամսից կարճ ժամկետ:

**Ուշադրություն**

**Վարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարում**

Հաճախորդի կողմից տոկոսագումարների և վարկի գումարների մարումները ժամանակին չկատարելու դեպքում այդ մասին տեղեկատվությունը կտրամադրվի ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր և «ԱԶՌԱ Զրեդիտ Ռեֆորթինգ» ՓԲԸ-ին: Բացասական վարկային պատմություն ունենալը հետագայում խոչընդոտում է օգտվել Բանկի կողմից տրամադրվող ֆինանսական գործիքներից:

Վարկային պարտավորությունները պայմանագրով սահմանված կարգով չկատարելու դեպքում պարտավորությունները կարող են մարվել Հաճախորդի գույքի հաշվին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Քարտի տարեկան սպասարկման վճարի գանձում**

Սպասարկման վճարը գանձվում է քարտի տրամադրման պահին՝ ամբողջ տարվա համար: Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում սպասարկման վճարը ենթակա չէ վերադարձման:

**Հավելյալ/կից քարտերի սահմանում**

Հավելյալ քարտ - նույն քարտային հաշվի ներքո բացված, նույն վճարահաշվարկային համակարգի ներքո տրամադրված լրացուցիչ քարտ /Visa - Visa/

Կից քարտ - նույն քարտային հաշվի ներքո բացված, տարբեր վճարահաշվարկային համակարգերի ներքո տրամադրված լրացուցիչ քարտ /Visa - Mastercard, ArCa; Mastercard - Visa, ArCa; ArCa - Visa, Mastercard/

Մեկ պրեմիում դասի /Visa/Master Card Gold, Visa Platinum, Visa Infinite/ հիմնական քարտին անվճար կարող է տրամադրվել միայն մեկ պրեմիում դասի հավելյալ/կից քարտ, յուրաքանչյուր հաջորդ հավելյալ/կից քարտի տրամադրման համար միանվագ գանձվում է տվյալ քարտատեսակի համար սահմանված տարեկան սպասարկման վճարի չափով գումար:

**Քարտի արժույթից տարբերվող արժույթով գործարքներ**

Վիզա քարտատեսակների հաշվի արժույթից տարբերվող արժույթով ԱրՔա համակարգից դուրս գործող կանխիկացման կետերում, բանկոմատներում, առևտրի և սպասարկման կետերում կատարված գործարքների դեպքում արտարժույթի փոխանակման ժամանակ գործում է Բանկի կողմից սահմանված 2% միջնորդավճար: Բացառություն են կազմում ԱՄՆ դոլարով և Եվրոյով կատարված գործարքները:

Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության/գործարքի հավաստագրման պահին գործառնության/գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են ArCa/Visa/MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում Visa վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժույթային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

**Հետգանձման անհիմն հայտ**

Անհիմն է համարվում հաճախորդի կողմից Բանկին ներկայացված հայտը, որի մեջ նշված տեղեկություն/ները իրականությանը չի/են/ համապատասխանում:

**Փակված քարտային հաշվի մնացորդ**

Փակված քարտային հաշվի մնացորդը երեք ամսվա ընթացքում չօգտագործելու դեպքում գանձվում է 1,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր տարվա համար: Եթե մնացորդը փոքր է 1,000 ՀՀ դրամ գումարից, ապա գանձվում է ամբողջ մնացորդային գումարը և հաշիվը փակվում է:

**Վարկային սահմանաչափի տրամադրման/ավելացման վճար**

Սակագինը կիրառելի չէ դրամական միջոցների, ՀՀ պետական և Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի գրավադրմամբ հաշվարկային քարտերի դեպքում:

**Քարտային հաշվի դրական մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոս**

Տոկոսը հաշվարկվում է օրվա վերջին դրական մնացորդի նկատմամբ և վճարվում եռամսյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի ավարտից հետո՝ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:

**Քարտային հաշիվը տնօրինելու իրավունք**

Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

## Հեռահար կապի միջոցներ

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

**Converse Անցանց Բանկ / Converse Mobile** - <https://conversebank.am/hy/internet-banking/>

**Իմ Կոնվերս** - <https://conversebank.am/hy/my-converse/>

**SMS – Converse / USSD** - <https://conversebank.am/hy/sms-converse-ussd/>

## Քարտի կորստի/գողացվելու դեպքում

Քարտի կորստի /գողացվելու դեպքում այն արգելափակելու համար հարկավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ հետևյալ եղանակներից ցանկացածով.

1. գանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով,
2. գանգահարելով Բանկ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.
  - ✓ ժամը 9:00-22:00՝ **+374 10 511210, 511211**
  - ✓ շուրջօրյա՝ **+374 10 545514**
 Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնությունը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:
3. Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ գանգահարելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ **+374 10 592222** հեռախոսահամարով:
4. ուղարկելով համապատասխան գրավոր հաղորդագրություն [card@conversebank.am](mailto:card@conversebank.am)
- էլ. հասցեով կամ **+374 10 511212** ֆաքսով
5. ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին ամենաուշը 1 բանկային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին:

## Գործարքի բողոքարկում

Քաղվածքում գործարքի հաշվեգրման պահից 60 օրացուցային օրվա ընթացքում Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը կարող են չդիտարկվել Բանկի կողմից: Գործարքի բողոքարկման համար հարկավոր է պահպանել գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը: Հայտը հասանելի է Բանկում, ինչպես նաև հետևյալ հղումով՝ <https://conversebank.am/hy/all-forms/>

## Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները

Քարտի տրամադրման և օգտագործման կանոնները ներառում են Քարտի օգտագործման, պահպանման, անվտանգության ապահովման, քարտով գործարքների բողոքարկման վերաբերյալ կարևոր դրույթներ: Կանոնները հասանելի են հետևյալ հղումով՝ <https://conversebank.am/hy/cards/>

## Բանկումատներ և կանխիկացման կետեր

Բանկի բանկումատների ցանկ՝ <https://conversebank.am/hy/atms/>

Բանկի մասնաճյուղերի ցանկ՝ <https://conversebank.am/hy/branches/>

## Վարկը տրամադրելու դրական որոշման և մերժման գործոնները

Բանկը հակված է տրամադրել վարկը, եթե՝

- Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և սահմանափակող դրույթներին,
- Հայտատուն գնահատման արդյունքում ճանաչվում է վարկունակ,
- Հայտատուի ներկայացրած փաստաթղթերը և տեղեկանքները արժանահավատ են և ներառում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները հայտատուի վարկունակությունը ստուգելու համար,
- Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Հայտատուի՝ վերոնշյալ պայմաններից ցանկացածին, ինչպես նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ պահանջներին չհամապատասխանելը կարող է հանգեցնել վարկի տրամադրման մերժմանը:

## Վճարային քարտի տրամադրման վայրը

Դեբետային և հաշվարկային քարտը տրամադրվում է Բանկի Գլխավոր գրասենյակում և մասնաճյուղերում:

**Ճանուցում ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին**

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը (այսուհետև՝ Յիմնադրամ):

Ավանդի արժութային կառուցվածքը		Ավանդի երաշխավորման առավելագույն չափը
Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ		10 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ		5 միլիոն ՀՀ դրամ
Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավելի է	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 5 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

**Յիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6  
 Հեռախոս՝ +374 10 583514, +37410 592664**

**Ճանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ**

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:  
 Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

**Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ  
 Էլ. փոստ՝ [info@fsm.am](mailto:info@fsm.am)  
 Հեռախոս՝ (+37460) 70-11-11  
 Ֆաքս՝ (+37410) 58-24-21**

**Կապ Բանկի հետ**

- Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝
- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
  - այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
  - զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
  - Viber՝ +374 95 511211
  - Skype՝ conversebank-callcenter